հողերը ունեին արդեն զգալիորեն նոսրացած հայ բնակչություն։ Անգեղակոթից սկսած մինչև Տեղ Եռաբլրի—Ուչթափալարի սարահարթի վրա և նրան կից Սյունիքի Հրաբխային բարձրավանդակի լանջերին աղատորեն տեղավորվում էին թաթարական և քրդական ցեղերի առաջնորդները։ Այդ շրջանում Ղարաբաղի խաները բաժանում էին ընդարձակ հողեր իրենց սիրելիներին, և ռուսական տիրապետության հաստատվելու միջոցին այդտեղ արդեն զետեղված էին բազմաթիվ թաթարական և քրդական ձմեռանոցներ, որոնց խոշոր ցուցակը արձանագրել է Անդրկովկասի վարչապետի կողմից ուղարկված մասնաժողովը Ղարաբաղի խանության բնակավայրերի իր նկարագրության մեջ։ Քրդական ցեղերը երևացել էին Կուր և Արաքս գետերի խառնուրդի շրջանում օսմանյան զորքերի առաջխաղացության հետ սերտ կապակցությամբ և այնուհետև չէին նահանջել կրկին դեպի իրենց հայրենի հարավային լեռնաստանը։ Նրանք տեղավորվեցին իրենց մայր երկրին բնական-աշխարհագրական պայմաններով այնքան նման Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակի վրա, այնտեղ, որտեղ խորհրդային իշխանության օրով շրջանը ստացավ Լեռնային Քուրդիստան անունը՝ հարևան Լեռնային Ղարաբաղից տարբերվելու համար[19]։ Սերտ կապ հաստատելով թաթարական շրջապատի հետ, մանավանդ ամառային ամիսներին, երբ Մուղանի դաշտից բարձրացող թաթար անասնապահները, գրեթե ամբողջովին թողնելով տաք ստորադիր տափաստանները, իրենց վրաններով ծածկում էին, ինչպես և այժմ, բարձրավանդակի ճոխ արոտավայրերը, քրդերը արագ մոռանում էին իրենց ավանդական սովորությունները և յուրացնում կրոնակից թաթարներից ոչ միայն լեզուն, այլև կենցաղային ձևերը։ Մերձեցման այդ պրոցեսը արդեն բավականաչափ խորացած պիտի լիներ ռուսական կառավարության հաստատման նախօրյակին՝ գրեթե երեք սերունդների ժամանակամիջոցում և այնուհետև, մինչև այսօր էլ շարունակվելով, այնքան ծավալվել է, որ վերջին մարդահամարը հաճախ դժվարացել է որոշել՝ գրանցվողը թաթա՞ր է, թե՞ քուրդ։ Տեղական քրդերի մեջ լեզվական և ազգագրական նյութեր ժողովող գիտաշխատողները շատ չնչին հետքեր են գտնում այստեղ հին քրդական առանձնահատկություններից։

Հայ բնակչության թվի նվազելը Սիսիան և Կապան գավառներում, Դավիթ Բեկի գլխավորած ապստամբությունից հետո, անդրադառնում էր նաև հայ մելիքների ռազմական ուժի թուլացման վրա։ XIX դ. սկզբներին, երբ Ղարաբաղի խանը իրեն ճանաչեց ռուսական կայսեր հպատակ և իր երկիրը ռուսական կայսրության հետ 1805 թ. միացած, մելիքների կազմակերպությունը կորցրել էր արդեն իր նախկին միասնությունն ու կազմակերպվածությունը։ Բնակչության մեջ նստակյաց տնտեսություն վարողների տոկոսը փոքրացել էր։ Թաթար-քրդական քոչվոր տնտեսությունները սկսել էին տեղ-տեղ բացարձակորեն իշխել։ Մելիքների ձեռքի տակ հավաքվող զինված մարդկանց թիվը դգալի կերպով փոքրացել էր։ XVIII դ. սկզբում ամենախիտ հայ բնակչությունն ունեցող Կապանի գավառը մի հարյուրամյակ անց ներկայացնում էր տխուր պատկեր։ 1805 թվից հետո մինչև Գյուլիստանի դաշնագրությունը, երբ Ջավնդուր (Օխչի, այժմ՝ Ողջի) գետը պետական սահման ճանաչվեց Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, Ղարադաղի և Պարսկական Մուղանի և

[19] Այժմյան Լաչինի և Քելբաջարի շրջանները։ Այդ շրջանների գլխավոր մասը այն ժամանակ կոչվում էր Քոլան։